ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

ԱՌԱԾ

ԳՐԵԹԷ միշտ մարդիկ թռչնոց կը նմանին, որ նոյն որոգայթից մէջ կը բռնուին՝ ուր որ իրենց պէս անթիւք բռնուեր են։ Ինչուան որ անձամբ չփորձեն՝ ուրիշներուն փորձէն օգուտ չեն առնուր։ Ասոր համար է որ խելքը առաջ չերթար։

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ՄԱՐԴՍ քոյր աշխարհ կ'ըսուի, վասն զի ամէն տեսակ բնութիւն ունի, աստուածային, հոգեկան, անասնական, բուսական, նիւթական, և այս ամենուն վրայ ալ կը մտածէ։

Հին փիլիսոփայ մը կ'ըսէ թէ ութ կերպով ճանաչմունք կ'ընայ, որ են. Զգացումն, երևակայութիւն, արուեստ, կարծիք, խոհեմութիւն, գիտութիւն, իմաստութիւն, խորհրդածութիւն, Ասոնցմէ առջի երկուքը՝ կենդանեաց ալ տրուած են, մէկալները՝ աստուածոց են, միայն կարծիքն է մարդուս։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱԿ

ԱՐԱԲԱՑԻ պատմիչ մը Քրիստոսի 813—833 թուականին խալիֆայից տրուած աշխարհքները և անոնց տուած տարեկան հարկը կարգաւորելու ատեն՝ Հայաստանի վրայ ալ այս հետաքրքրական տեղեկութիւնս կուտայ։

Ի. — Հայոպան, 13,000,000 դրամ, 20 գորգ, 200 ջրի, 30 պոպոլգէնոպ, և ուրիշ երկու գլուխ բան ալ որ արաբացի ձեռագրին մէջ չկարդացուիր։

Հայաստանին այս տուած տարեկան տուրքը մնացած երեսունչինգ աշխարհքներուն տուածին հետ բաղդատելով ամենէն շատ տուրք տուող աշխարհքներէն մէկն ալ Հայաստանը կը գտնենք, որով ըսել է թէ Հայաստանի տարեկան բերքն ալ տուրքին համեմատ է եղեր։

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Պողպատի հանդէսը։

ԵՒՐՈՊԱ. Անգղիոյ մէջ՝ Կլոչեսդէր։ Պելճիա։ Գաղղիոյ մէջ՝ Լիմուազէն։ Գերմանիոյ մէջ՝ Ֆրանքոնիա գաւառին Հաննէպերկ քաղաքը. և Խոդրիա։

ԱՍԻԱ. Թաթարստանի մէջ՝ Ազէմ։ Պերսիոյ մէջ՝ Մարդաւան։

ԱՄԵՐԻԿԱ. Կրանադա։

Պողպատի գործարանները։

ԵՒՐՈՊԱ. Շուեդ։ Ռուսաստանի մէջ՝ Դուլա։ Անգղիոյ մէջ՝ Պիրմինկէմ, և Իռլանտա։ Գաղղիոյ մէջ՝ Սէն և Մէն և Պելճերաք։ Զուիցերիի մէջ՝ Ճինեվրա։ Գերմանիոյ մէջ՝ Պրունզուիք, Վերին Սաքսոնիա, Քոլոնիա, Ֆրանքֆորդ, Օֆէնպախ, Ռաշդատ։ Աւստրիոյ մէջ՝ Քրէմս. Իտալիոյ մէջ՝ Կրաց. Կարինդիոյ մէջ՝ Վիլլախ. Պոհեմիոյ մէջ՝ Բարտուպից, Գարլշպատ։ Բրուսիոյ մէջ՝ Տանցիք։ Դոսկանայի մէջ՝ Փլորենտիա և Աբարբերիա։

ԱՍԻԱ. Միայն Դամասկոս։

Պողպատի տարատարի գործերը։

ԵՒՐՈՊԱ. Շուեդի մէջ՝ Սթոքոլմ։ Անգղիա գործարաններուն քաղաքները։ Պելճիոյ մէջ՝ Ռուպէ, Թիոնվիլ։ Գաղղիոյ մէջ՝ Օքսէր։ Գերմանիոյ մէջ՝ Ֆրայտեմպերկ, Ֆուրդ։ Աւստրիոյ մէջ՝ Կրաց. Քարինդիա. Թրեստ. Բակուզա։ Սպանիայի մէջ՝ Պարչելոնա, Քատիչէ։ Իտալիոյ մէջ՝ Վենեսիկ. Զիվիդավէքքիա. Անքոնա. Լիվոռնոյ։

ԱՍԻԱ. Իզմիր։ Պարսկաստան։

ԱՄԵՐԻԿԱ. Միացեալ Նահանգները։

ԲՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ԻՆՁՈՒ հրդեհեալ տան մը վրայ բարակ անձրև գալու ըլլայ նէ կրակը աւելի կը ճարակի.

— Վասն զի երբոր հրդեհեալ տան մը վրայ անձրև կուգայ՝ կրակին տաքութիւնը շուտ մը աս անձրևին ջուրը գոլորշի կը դարձնէ ու մասունքը իրարմէ կը բաժնէ. և ան երկու տարերքը որոնց մով գոլորշին կը բաղկանար՝ իրարմէ կը զատուին. Ջրածինը որ դիւրավառ է՝ կրակին նոր ճարակ մը կ'ըլլայ, իսկ Թթուածինը որ վառելու կ'օգնէ՝ կրակը կ'արծարծէ։

ՀԱՆԵԼՈՒԿ

Ի հանդիպոյ կանգնեալ կայ
Ինձէն առնու և ինձ տայ։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ԱՂԲ